բարձրաստիճան անձանց նրանց ասածները կրկնելով։ Այս անգամ այդ գերմանական պահպանողական լրագիրը կամեցաւ հետեւել Բիսմարկի օրինակին և ինչպէս սա սպառնաց բերլինցիներին տեղափոխել մայրաքաղաքը, լրագիրն էլ նկատում է, որ տեղական բարձր վարչութիւնը և իշխանութիւնը կը տեղափոխվին Բրոմբերգ, եթէ Պօզնանի բնակիչները լեհացիների տեղ գերմանացի պատգամաւորներ չեն ընտրի։

Բիսմարկի օտարոտի սպառնալիքով ըզբաղված է ամբողջ Գերմանիան։ Բիսմարկի արտասանած խօսքերը կատարեալ փոթորիկ բարձրացրին, այնպէս որ մայրաքաղաքը տեղափոխելու սպառնալիքը այժմ հարց է դարձել Գերմանիայի համար։ Գուցէ իշխան Բիսմարկ ինքն էլ չէր սպասում, թէ ինչպիսի կրքեր կը զարթեցնի նրա սպառնալիքը։

Բանը նրանումն է, որ Պրուսիայի հետ ծնված և սնված Բերլինը կոպտութեան և զինուորականութեան մի նշանաբան է, որ ատելի է միացած Գերմանիային։ փայլուն յաղթութիւններից ժամանակաւորապէս կուրացած Գերմանիան նոր է հասկացել, որ շատ թանգ գնով է գնել այդ փայլը, զոհելով նրան իր ազատութիւնը և նիւթական բարօրութիւնը։ Պրուսիացիները և մանաւանդ բերլինցիները միւսների նման իրանց փառքի ծանրութեան տակ ճնշված բոլոր դժբաղդութիւնները իշխան Բիսմարկին են վերաբերում և երեւակայում են, որ նրանից ազատվելով, կազատվեն զինուորականութեան և կամայականութեան ճնշումից։ Բայց միւս գերմանացիները հասկացել են, որ իշխան Բիսմարկ միակ պատճառ չէ Գերմանիայի ներքին ցաւալի դրութեան, այլ նա արտայայտում է պրուսական ընդհանուր ոգին, որ միայն կարգապահութիւն է ճանաչում և ատում է ամէն տեսակ ազատութիւն, բացի փիլիսոփայական մտքի ազատութիւնը և դա էլ Գերմանիայից անցել է Պրուսիա։

Այդ պատճառով մայրաքաղաքի տեղափոխելու միտքը ոգևորութեամբ ընդունվեցաւ։ Այդ փոփոխութիւնը մի միջոց համարվեցաւ Պրուսիան գերմանականացնելու և իշխանութիւնը աւելի մարդասէր դարձնելու համար։

Կարելի է հաստատ ասել, որ սպառնալու նպատակով արտասանած իշխան Բիսմարկի խօսքերը լաւ հողի վրա են ընկել և վաղ թէ ուշ կը տան իրանց պտուղները։ Բերլինի ազատասէր լրագիրների երկար դատողութիւնները և պրուսիացիների ծաղրը, որոնք առաջարկում են մայրաքաղաքը Վարցին կամ Ֆրիդրիխսրուէ տեղափոխել, կօգնեն միւս գերմանացիներին, որովհետև առաջինները պնդում են, որ Բերլինը պրուսականութեան կենտրոն է, որի հետ կապված է Պրուսիայի զօրութիւնը և թագաւորող տան հեղինակութիւնը, հետևապէս նրանք հաստատում են այն, ինչ որ ամենից ատելի է միացած Գերմանիայի համար։ Իսկ իշխան Բիսմարկ շարունակում է իր սկսած խաղը։ Նորերումս նա յետ առաւ բայխստագին ներկայացրած բայխստագի նոր շինութեան նախագիծը, որի մասին մինիստրութիւնը համաձայնութիւն էր կայացրել քաղաքային վարչութեան հետ։ Բայխստագը պէտք է հաստատէր ծախսերը շինութիւնը սկսելու համար։ Բիսմարկ իր այդ վարմունքը մեկնել է նրանով, որ „գործը պէտք է յետաձգել ի նկատի առնելով հաւանական պատահմունքներ“։ Բերլինցիները բարկութեամբ շարժում են գլուխը, իսկ հարաւային գերմանացիները ուրախութեամբ նկատում են. «Աստուած տայ, թող այդ հաւանական պատահմունքները շուտ տեղի ունենան։»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 28 ապրիլ

Արդէն հաղորդեցի ձեզ հեռագրով «Միացեալ ընկերութեան» մէջ այսօր տեղի ունեցած ուրախալի փոփոխութեան մասին. գործադիր ժողովը, որ կազմված էր հին ուղղութեան անդամներից, ընկերութեան ընդհանուր քուէարկութեամբ գործից հրաժարվեց։ Նոր գործադիր ժողովի նախագահ ընտրվեց դոկտոր Փէշթիմալճեան, որին ճանաչում էք իմ մասնաւոր նամակներից։ Նա կը կազմի նոր գործադիր ժողով, որին կը մասնակցէ և պ. Մինաս Չերազ, ինչպէս գործնական արհեստի մասնագէտ, դոկ. Փէշթիմալճեան անտարակոյս իր բռնելիք ընթացքին կը տայ կրական ուղղութիւն, մօտաւորապէս նոյն պրօգրամով, որի մասին անցեալ նամակներիս մէջ ընդհանուր դիտողութիւններ եղան։ Բայց որովհետև առաջվայ գործադիր ժողովը թողել է գործերը շատ խառնաշփոթ դրութեան մէջ, վասնորոյ նոր նախագահին հարկաւոր է բաւական ժամանակ մինչև ամէն բան կարգի դնելը։ Այսպիսով Կ. Պօլսի «Միացեալ ընկերութիւնը» հասկացաւ հանգամանքների կարևորութիւնը ու չը նայելով զանազան յետադէմ մարդիկների գրաւոր ու բերանացի բողոքների, սթափվեց քնից ու փոխեց իր ղեկավարողներին։ Այսուհետև մնում է յաջողութիւն մաղթել նոր գործադիր ժողովին և ցանկանալ, որ նա հաստատ ու արդիւնաւէտ ուղղութիւն տայ այն ընկերութեանը, որին մենք, ռուսահայերս պատրաստ ենք անչափ համակրել։ Յուսով ենք ես, որ միանգամ ընդ միշտ նա գլխ կը դնէ իւրաքանչիւր բարի խորհուրդին, մանաւանդ ռուսահայերին ճանաչող մարդկանց, եթէ լինեն այդ մարդիկ հէնց իրանցից ես, կաշխատէ սռէպ սռէպ մեզ տեղեկութիւններ տալ իր ընտրած նոր պրօգրամի, ուղարկած հրահանգների և Հայաստանից ստացած բոլոր հաղորդակցութիւնների մասին, որոնց համեմատ ռուսահայերն էլ իրանց մասնագէտների բերանով չեն զլանայ քննադատել սոյն պրօգրամը և տալ այսպիսով մեր ամենից ջերմ սիրած Հայաստանին այն, ինչ կարող է մի չնչին դեղ անել նորա այնչափ մեծ ու դժուարարոյժ անտեսական վէրքերին։ Թող հիմայ հանգիստ առնեն զանազան «Ցօսիններ» ու փոխանակ իրանց գլխից դուրս դատողութիւններ տալու, գնան իրանց արհեստով պարապեն ու խաչխաչով մարդիկ բժշկեն։

Հիմայ մնում է կանանց ընկերութիւնների ուղղութիւնը փոխված տեսնել, որի մասին կը խօսեմ շուտով յատուկ նամակի մէջ։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սօֆիայից հեռագրում են լրագիրներին հետևեալը. «Բուլգարական իշխան Աղէքսանդր ընդունեց եւրոպական պետութիւնների դիպլօմատիկական ներկայացուցիչներին, և յայտնեց իր պատրաստակամութիւնը Բուլգարիայի կառավարիչ մնալ, եթէ ազգային ժողովը կը համաձայնվի նրա ցանկութեան հետ։ Մինիստր-նախագահը, գեներալ Էրնրօտ, իր կողմից հաղորդեց դիպլօմատներին, որ գործերի խճճված դրութեան մէջ լինելու պատճառով, իշխանը պահանջում է սահմանադրութեան գործողութիւնների մի քանի տարով կանգնեցնելը։ Պատգամաւորների ժողովը հաւաքվում է միայն բիւջէտը հաստատելու համար միայն. իսկ մնացած բոլոր բաների մէջ իշխանը գործողութիւնների անպայման ինքնուրոյնութիւն է պահանջում։ Հէնց որ գործերի դրութիւնը կը բարւոքվի, սահմանադրութիւնը նորից իր ույժը կը ստանայ։ Իշխանը մտադիր է հետևեալ վերանորոգութիւնները մտցնել՝ պատգամաւորների թիւը պակասեցնել, պատգամաւորների ժողովից պաշտօնական անձանց հրաժարեցնել, շատացնել պատգամաւորների թիւը, որոնց իշխանը կը նշանակի։»

—Վիէննայից հաղորդում են, որ աւստրիական լրագիրները հաստատում են, թէ մի քանի պետութիւններ, որոնց թւում և Աւստրիան, դիմեցին, իբր թէ, ռուսաց կառավարութեանը հարցմունքներով հարաւում եղած անկարգութիւնների պատճառով։ Ի՞նչի մէջն էին կայանում այդ հարցմունքները—անյայտ է, և հէնց ինքն այդ լուրը շատ կասկածելի է երևում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի։ Այսօր պարսկական արտաքոյ կարգի դեսպանը ուղևորվեցաւ Թէհրան։ Նա կանցնի Մոսկվայից, Նիժնի-Նովգորոդից և Աստրախանից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 93 ր. 87 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 94 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 50 կ., երկրորդ 216 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 75 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր., ոսկի 8 ր. 10 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լոնդոնի վրա արժէ 24,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ. 25 պֆ.։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

—Դուք մի քանի րոպէ առաջ գանգատվում էիք ձեր աղքատութեան վրա, ասաց նրան երիտասարդը.—ահա ձեզ տալիս եմ բոլորը, ինչ որ ինձ մօտ ունեմ. դրանով դուք կարող էք ուղղել ձեր դրութիւնը։

—Ձեր արծաթը թող ձեզ մօտ մնայ, պատասխանեց կինը. — մենք սովորութիւն չունենք Աստուծոյ հիւրերից փող ընդունելու։

—Բայց ես մի շատ թեթև բան կը խնդրէի ձեզանից։

—Ինչ որ կամենում էք հրամայեցէք։

—Դուք ձեր հիւրի այստեղ լինելը բոլորովին գաղտնի պիտի պահէք. իսկ պատճառները յետոյ ինքներդ կիմանաք։

Այդ մասին անհոգ կացէք, պարոն, դուք կարող էք հանգիստ քնել այստեղ։ Ինձ համար մի և նոյն է, թէ դուք ով էք, կամ ինչ հանգամանքներից ստիպված ձեզ թագցնում էք։ Բաւական է, որ ես մի լաւութիւն արած կը լինեմ ձեզ։ Ինքս լաւ եմ հասկանում, որ պատերազմական ժամանակ է, քիչ բաներ կարող են պատահել մարդիկների հետ...

—Շնորհակալ եմ բարեսիրտ կին, ասաց երիտասարդը և մտաւ չնարոնի մէջ,— ես հաւատացած եմ, որ դուք կը կատարէք ձեր խոստմունքը։

Այն մարդը, որ սովորած էր գեղեցիկ սենեակներում, մետաքսից պատրաստած փափուկ անկողինների մէջ պառկել, տարածվեցաւ կապերտ կտորի վրա, գլուխը դրեց կաւէ բարձի վրա, որ լցրած էր խոտով և մի քրքրված վերմակով ծածկվեցաւ։ Այդ ողորմելի անկողինը նա ինքն էր պատրաստել իր համար։ Դա մի պատիժ էր, որ Աստուած ցոյց էր տալիս նրան, ասելով. «հիմայ քո անձի վրա փորձիր, թէ ինչ բան է աղքատութիւնը. քանի հազար ընտանիքներ դու զրկել ես հացից և հագուստից. հիմայ տես, թէ ինչ տեսակ տեղում են պառկում քո զոհերը»...

Բայց երիտասարդը ամենևին ուշադրութիւն չը դարձրեց իր կացութեան վրա։ Նրա զգայարանքները այն աստիճան բթացած էին, որ ամենևին չէր զգում չնարոնի մէջ տիրող անտանելի գարշահոտութիւնը։ Նրա յոգնած, ջարդված անդամները իսկոյն հրաւիրեցին մի խորին և հանգիստ քուն, որ երբէք չէր վայելած իր հօր տան մետաքսեայ անկողիններում։

Տանտիկինը ձեռքի ճրագը հանգցնելով, կանգնած մնաց չնարոնի դրան մօտ և երկար ուշադրութեամբ լսում էր քնած հիւրի խռմփալու ձայնը։ Եթէ մէկը խաւարի մէջ կարող լինէր նշմարել այդ մանկահասակ կնոջ դէմքի ուրախ արտայայտութիւնը, կը հասկանար, թէ որպիսի անսահման հոգեկան բերկրութեան մէջ է գտնվում նա։ Իր երկրի տիրող իշխանի որդուն, իր հարստահարչին նա կոխել էր չնարոնի մէջ։ Դա մի կատակ էր, մի դաժն և չար կատակ։ Ուրիշ կերպով վրէժխնդիր լինել չէր կարող նա, բայց դրանով ես չը բաւականացաւ։

Երբ բոլորովին համոզվեցաւ, որ նա քնած է, հեռացաւ չնարոնից, գնաց դէպի բակի դուռը, ձեռքը տարաւ փականքին, տեսաւ, որ կողպված է։ Թէև դուռը ինքն էր կողպել, բայց կամենում էր նորից ստուգել։ Յետոյ մտաւ խրճիթը և կրկին վառեց ճրագը։ Մօտեցաւ պառկած երեխաներին, նրանք նոյնպէս քնած էին, բոլորը մէկ վերմակի տակ։ Նա ուղղեց վերմակը, որ անհանգիստ երեխաները մի կողմ էին գցել։ Եւ ապա սկսեց ճրագով խրճթի քունջուպուջախը որոնել։ Նա անդադար վեր էր առնում այս և այն առարկաները, նայում էր և մի կողմ էր գցում։ Կարծես, նրանք չէին յարմարվում մի նպատակի, որի համար կամենում էր ծառայեցնել։ Յետոյ գտաւ մի կոտրած դանակ, փորձեց ձեռքի վրա, տեսաւ որ շատ բութ էր։ Դանակը նոյնպէս մի կողմ դրեց։ Վերջապէս գտաւ մի թաւլամես. *) այդ լաւ էր, բայց պէտք էր մի սուրիչ գործիք ես նրան ցանկացած տեղը խրելու համար։ Վեր առեց քուփթայ ծեծելու օթակը։ **) Այդ երկու զէնքերով զինվեց նա դէպի չնարոնը։ Կատուի նման իր քայլերը այնքան ուշիկ-ուշիկ էր փոխում, որ ամենևին ձայն չէր լսվում։ Մի քանի րոպէ կանգնեց չնարոնի դրան առջև, ականջ էր դնում։ Երիտասարդը ոչ միայն ծանր կերպով խռմփում էր, այլ սկսել էր քնի մէջ խօսել։ Այդ աւելի հաստատ նշան էր, որ նա արթուն չէ։

Նա զգուշ կերպով մտաւ չնարոնի մէջ, ճրագը վառեց մի կողմ դրեց և սկսեց նայել երիտասարդի վրա։ Չնարոնը այնքան նեղ էր, որ դժուար էր արձակ շարժումներ գործել, այսուամենայնիւ, նա առանց մի ձայն հանելու, տեղաւորվեցաւ երիտասարդի գլխի մօտ։ Նա քնած էր քամակի վրա։ Գլուխը թեքվել էր դէպի բարձի եզրի կողմը։ Սկսեց կամաց-կամաց գլուխը տանել դէպի բարձի մէջ տեղը, և նրան այնպիսի դիրք տալ, որ ճակատը դէպի վեր լինի, իսկ ծոծրակը բարձի վրա դրած։ Այդ գործողութեան ժամանակ յանկարծ նրա ձեռքերը սկսեցին դողալ. խղճահարութեան նման մի զգացմունք սկսեց տանջել նրան։ Նա մեղանչում էր հիւրասիրութեան դէմ, մեղանչում էր տուած խոստման պահպանելու դէմ։ Այդ մարդը ապաստան էր գտել նրա խրճիթում, երկրի իշխանը պատսպարվել էր մի աղքատ կնոջ հովանաւորութեան ներքոյ։ Ի՞նչպէս դաւաճանել նրան, ինչպէս մեղանչել խղճի և ազնուութեան դէմ։ Այդ յանցանք չէր լինի, մի մեծ և սոսկալի յանցանք։ Նրա սիրտը սկսեց սաստիկ բաբախել։ Պատրաստ էր վեր կենալ, թողնել և հեռանալ այդ զարհուրելի բնակարանից։

Այդ միջոցին երիտասարդը դեռ շարունակում էր խօսել քնի մէջ։ Նրա անկապ, խառնափնթոր խօսքերից կինը խիստ պարզ որոշեց այդ նախադասութիւնը. «պէտք է կոտորել բոլոր բէկեաններին»... *)

Նա բոլորովին կատաղեց այդ խօսքերը լսելու ժամանակ։ Նա ինքը պատկանում էր նոյն կուսակցութեանը։ Նրա ամուսին այրը նոյնպէս բէկեան էր, և բէկի կամաւորների թւում, գուցէ հէնց նոյն ժամում, կռւում էր նոյն մարդու զօրքերի հետ, որ այժմ տարածվել էր իր առջև, որի կամքը այդ րոպէում իր ձեռքումն էր։

«Դրանց պէտք չէ խնայել»... ասաց նա իր մտքում և նրա աչքերը վառվեցան կատաղի բարկութեամբ,—«որքան մարդիկ են կոտորել դրանք, որքան կնիկներ են անբախտացրել... չը կայ մի գիւղ, չը կայ մի խրճիթ, որ դրանց ձեռքով ոչնչացած չը լինի...։ Դրանց պէտք չէ խնայել»...

Վերջին խօսքերի ժամանակ նա խաչակնքեց իր երեսը, ահագին երկաթեայ մեխի սուր ծայրը դրեց երիտասարդի ճակատի վրա և օթակով այնպէս սաստիկ զարկեց, որ մեխը մինչև կէսը խրվեցաւ նրա գլխի մէջ։ Նա կրկնեց զարկը և տաք արիւնը դուրս ցայտեց վէրքից։ Երիտասարդը գործեց մի քանի ցնցողական շարժումներ և հանգստացաւ։

Կինը իսկոյն դուրս եկաւ, իր ետևից կողպելով չնարոնի դուռը։

(Կը շարունակվի)

---

*) Թաւլամես նշանակում է ախոռատներում գործ ածվող երկաթէ մեծ մեխ, որ գլխի կողմում օղակ ունի և այնտեղից կապում են անասուններին։

**) Օթակ նշանակում է փայտից շինած մեծ մուրճ։

*) Բէկեան կոչվում էին Դաւիթ բէկի կուսակիցները։